<<Տիկ ՄԵՏ>>

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ԲԱՆԵՑՐԱԾ ԹԹՎԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ, ՊԱՀՈՒՄ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Էկո Մենեջմենթ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝

Արթուր Մինասյան _____

Կատարող՝ «ՏԻԿ-ՄԵՏ» ՍՊԸ ներկայացուցիչ՝

Մարիամ Եղիազարյան _____

Էջմիածին 2021

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 4
1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը 4
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը 4
1.3. Իրավական հիմքերը 5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ 6
2.1. Տեղադիրքը 6
2.2. Կլիմայական պայմանները 6
2.3. Օդային ավազան 9
2.6. Կենսաբազմազանություն 10
2.7.Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները 10
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
3.1. Մարտկոցների բնութագիրը 12
3.2. Մարտկոցների գործածության գործունեության տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները 13
3.3. Արտադրողականությունը և օգտագործվող նյութերը 17
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 18
4.1. Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը 18
4.2. Նախատեսված մեղմացնող միջոցառումները 19
4.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Ձեռնարկողի անվանումը՝
«ՏԻԿ-ՄԵՏ» ՍՊԸ
Ձեռնարկողի գրանցման հասցեն՝
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Շահումյան փողոց, տուն 32:

Ձեռնարկողի գործունեության վայրը՝
ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Էջմիածին, Մաշտոցի փողոց 2-րդ փակողի 0 հասցե:
Գործունեության ոլորտը՝
Թափոնների գործածության գործունեության ոլորտ:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

- Նախատեսվող գործունեության անվանումը՝
  Բանեցրած թթվային մարտկոցների հավաքում, պահեստավորում/պահում, օգտահանում և փոխադրում:
- Գործունեության նպատակը՝
  բնակչությունից և կազմակերպություններից գնել բանեցրած թթվային մարտկոցներ և նախատեսված գործունեությամբ սահմանված գործողությունների/գործածության ձևերի իրականացմամբ նախաձեռնել առևտրային գործունեություն՝ շահույթ ստանալու նպատակով: Գործունեությունն ունի նաև զգալի բնապահպանական արդյունք, քանի որ թույլ կտա կանխել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը ծանր մետաղներով և թթվային հոսքերով:

1.3. Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
9. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,
10. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

Նախատեսվող գործունեության պլանավորման և հետագա իրականացման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու թափոնների գործածության գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքով, ինչպես նաև <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննություն՝ երկու փուլով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Տեղադիրքը

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Էջմիածին, Մաշտոցի փողոց 2-րդ փակողի 0 հասցեում: Տարածքը և նրանում գտնվող շենք շինությունները սեփականության իրավունքով պատկանում են Վահրամ Սերյոժայի Համբարձումյանին (Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը կցվում է): Նախատեսվող գործունեության իրականացման համար կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր: Նախնական համաձայնություն տարածքի սեփականատիրոջ և սույն գործունեության ձեռնարկողի միջև՝ վարձակալելու 521.4 և 1.9 քմ տարածքներ՝ արտադրական նշանակության պահեստից, 15.4 քմ կշռատնից (Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կցվում է), : Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսված տարածքն գնտվում է Էջմիածին համայնքի ծայրամասում և իրենից ներկայացնում է փակ շինություն, որի շրջապատված է այլ պահեստային և արտադրական տարածքներով (Իրադրության սխեման կցվում է):

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից տարածաշրջանը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում:

Ըստ ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղազննման, Էջմիածին քաղաքի տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդական հասակի լճային-ալյուվիալ նստվածքները, որոնք ներկայացված են՝ ավազակավերով, ավազներով, լճային կավերով և գլաքարա-ճալաքարա-կոպճային առաջացումներով: Ուսումնասիրված տեղամասում հիմնական ապարները ճալաքարային են:

Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ երկու շերտերը.

Լիցքեր՝ կազմված խճի, խճավազից, և կավավազների խառնուրդից: Շերտի հորատված հզորությունը 0,8-1,5 մետր է: Շերտը համատարած է: Դրանք ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Ճալաքարային գրունտներ՝ գետաքարի, կոպիճի, ավազի պարունակությամբ: Շերտն ունի համատարած բնույթ, հզորությունը 6,5մ-7,2մ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից Էջմիածին քաղաքի այս հատվածի տարածքը ըստ ֆոնդային տվյալների հանդիսանում է լավ ջրաթափանց և ջրանցիկ գոտի, Ստորերկրյա ջրերի մակարդակը Էջմիածին քաղաքի տարածքում տատանվում է 12-45մ սահմաններում:

2.2. Կլիմայական պայմանները

Ուսումնասիրվող գոտին համաձայն «Շինարարական կլիմայաբանության» (ՀՀՇՆ II-7.01-2011)-ի գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Շրջանը ունի ցուրտ ձմեռով և շոգ ամառով, չոր, խիստ ցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41^{0}C (Էջմիածին կայան): Օդի բացարձակ նվազագույն

ջերմաստիճանը կազմում է -31^{0}C (էջմիածին կայան): Օդի միջին հարաբերական խոնավությունը 60% է:

Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 280մմ, գերակշռում են արևմտյան, հարավ-արևմտյան ուղղության քամիները: 25 տարվա ընթացքում հնարավոր են 20մ/վրկ ուժգնության քամիներ, 50 տարվա մեջ 23մ/վրկ ուժգնության քամիներ: Քամու արագության ճնշումը՝ 35կգ/մ^{2}: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 40սմ, իսկ ձյան բեռնվածքի ճնշումը՝ 50կգու/մ^{2}: Բնահողի սառչելու առավելագույն խորությունը 60 սմ է:

Աղյուսակ 1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էջմիածին օդերևութաբանական կայանի տվյալներով

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
-3,7	-1.2	5,1	12,2	17.1	21.2	25.2	25.1	20.1	13.0	6.1	-0.4	11.67	-31	41

Աղյուսակ 3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Ձնածածկույթ		
Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
18	20	26	37	45	26	15	10	10	25	24	18	274	48	44	
14	22	25	26	29	46	34	25	27	25	46	18	46			

2.3. Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Էջմիածին համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 4-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն 2011թ.-ի ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Էջմիածին համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 56974 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 4), Էջմիածին համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշու մասնիկներ՝ 0,4 մգ/մ^3, ածխածնի մոնօքսիդ՝ 1.5 մգ/մ^3, ազոտի երկօքսիդ՝ 0,03 մգ/մ^3 և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ^3: Նշված մակարդակները չեն գերազանցում ՀՀ ազգային նորմերը (ՀՀ կառավարության որոշում 160-Ն, 2006 թ.), բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 2.6 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ (ՍԹԿ$_{փոշի}$=0,15 մգ/մ^3):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ջրային ռեսուրսներ: Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը մտնում է Արարատյան արտեզյան ավազանի մեջ: Արարատյան արտեզյան ջրավազանը ներկայացված է երեք ջրատար հորիզոններով: Առաջին հորիզոնը գրունտայինն է, երկրորդը՝ թույլ ճնշումային և երրորդը՝ ճնշումային: Այս բոլոր հորիզոններն իրարից բաժանվում են ջրամերժ կավային շերտերով: Գրունտային ջրերի մակարդակը Էջմիածին քաղաքի տարածքում տատանվում է 4-10մ-ի միջև: Գործունեության հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք



2.6. Կենսաբազմազանություն

Բնութագրվող տարածքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում և կառուցապատված տարածքներում, ուստի տեղանքում չկան վայրի բնության որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները՝ տարածքի և հարակից վայրերի յուրացված և ուրբանացված լինելու պատճառով:

Բնութագրվող տարածքում առկա են կանաչ գոտիներ, որտեղ աճում են տարբեր տարիքի ծառատեսակներ և թփեր:

2.7.Ելակետային սոցիալ-տնտեսական ցուցանիշները

Էջմիածին քաղաք Հայաստանի Արմավիրի մարզում: Հայաստանի քաղաքներից մեծությամբ չորրորդն է: Այժմ քաղաքը զբաղեցնում է 4424,82 հա հողատարածք, ունի 57 503 բնակիչ: Տնային տնտեսությունների թիվը՝ 18927 է: Էջմիածին քաղաքը ունի գլխավոր ճանապարհ դեպի մայրաքաղաք Երևան, որին միացված է գյուղերով: Էջմիածնից դեպի Երևան մայրուղին երկարությունը 16-17 կմ է:

Էջմիածինը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի մեծ քաղաքներից մեկն է՝ Հայաստանի տարածքում մեծությամբ 4-րդ քաղաքն է: Էջմիածնում կան 7 վանքային համալիրներ, որոնք կառուցվել են 4-10-րդ դարերում,սակայն գործում են 5 եկեղեցի, որոնցից մեկը՝ Էջմիածնի Մայր Տաճարը Հայաստանի գլխավոր եկեղեցին է և գտնվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համալիրի մեջ, որը Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնն է;

Էջմիածնում առկա հոգևոր կառույցներ - Մայր Տաճարը (301-303թթ.), Սբ. Հռիփսիմե վանք (618թ.), Գայանե վանք (630թ.), Սբ. Շողակաթ (1694թ.) եկեղեցին, Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցի (1767թ.) , Զվարթնոց տաճար (652թ.), Սբ. Մարիանե եկեղեցի (330-340թթ.):

2007թվականից Էջմիածինը պատմամշակութային իր հարուստ ժառանգությամբ (201 պատմամշակութային հուշարձան) ՅՈՒՆԵՍԿՕ-ի <<Համաշխարհային ժառանգություն քաղաքներ>> կազմակերպության անդամ է:

Համայնքում բնականոն զարգանում են տուրիզմը, առևտուրը, գյուղմթերքների վերամշակում և պահածոյագործությունը, ոգելիչ խմիչքների արտադրությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, սերմնաբուծությունը, անասնապահությունը և թռչնաբուծությունը: Համայնքում զգալիորեն բարելավվել է գյուղատնտեսության վիճակը: Իրականացվում է պտղատու և հատապտղատու բույսերի բազմացում, հացահատիկային մշակաբույսերի ցանք, կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի ցանք: Ցանքատարածությունների աճին զուգընթաց նվազել է հացահատիկի և հատիկաընդեղենի բերքը, իսկ կարտոֆիլի, բանջարեղենի, պտղի և հատապտղի, խաղողի բերքը աճել է: Համայնքի հողօգտագործողներին, որպես աջակցություն ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներով գարնանը և աշնանը հատկացվել է ազոտական պարարտանյութ և դիզելային վառելիք: 2016թ կարկտահարության և հեղեղումների հետևանքով 30-100 %-ով վնասվել են համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց հողատարածքների վրա աճեցված մշակաբույսերը: Վերջին տարիների ընթացքում քաղաքում աճ է գրանցվել մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության, ջրամատակարարման ոլորտներում:

Էջմիածնում արդյունաբերական ձեռնարկություններ -<<Էջմիածնի սարքաշինական գործարան>> ԲԲԸ, <<Ռեզիստր>> ԲԲԸ, <<Ռաստր>> ԲԲԸ, <<Էջմիածին հաց>> ԲԲԸ, «Պլասմասա», «Գրանիտ», «Հայքար», «Կարին», «Էջմիածնի սարքաշինական գործարան» ԲԲԸ, Էլեկտրոն գործարան, <<Էջմիածին կաթ>> ՍՊԸ, <<Իմպերիալ տուր>> ՍՊԸ, <<Շին. իրերի և կահույքի պատրաստման ֆաբրիկա>>, <<Էջմիածին գինու գործարան>>, <<Կոնսեր>> ՍՊԸ, Էջմիածնի պահածոների գործարան: Այժմ այդ ձեռնարկություններն իրականացնում են լայն սպառման ապրանքների և կենցաղային իրերի արտադրություն: աշխատում են ոչ լրիվ հզորությամբ:

Ներկայացնելով Էջմիածին քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամաշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Էջմիածնի քաղաքային կյանքին՝մշակութային և հոգևոր ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրահատուկ ազգային խոհանոցին և այլն:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Մարտկոցների բնութագիրը

Մարտկոցները էլեկտրաքիմիական հոսանքի աղբյուր են, որոնք կազմված են մեկ կամ մի քանի գալվանական էլեմենտներից։ Մարտկոցի վոլտաժը մեծացնելու համար օգտագործվում են բազմակի էլեմենտներ, ինչպես 12–Վ ավտոմոբիլային մարտկոցներում։ Մարտկոցների աշխատանքի հիմքում ընկած են օքսիդավերականգնման ռեակցիաները։ Օքսիդացման և վերականգնման շնորհիվ էլեկտրոդների միջև տեղի է ունենում էլեկտրոնների փոխանակում, որի շնորհիվ էլ մարտկոցը ապահովում է հոսանք։ Մարտկոցի օգտագործման տևողությունը կախված է մարտկոցում առկա նյութերի որակից և էլեկտրոլիտի վիճակից։

Ըստ շահագործման, մարտկոցները բաժանվում են երկու տեսակի՝

- *Առաջնային,* որոնք լիցքաթափվելուց հետո չեն կարող վերալիցքավորվել և պետք է վերաթողարկվեն կամ հանվեն գործածությունից, երբ վոլտաժը կնվազի՝ հասնելով զրոյի։
- *Երկրորդային,* որոնք լիցքաթափվելուց հետո կարող են վերալիցքավորվել և օգտագործվել կրկին։

<<Տիկ Մետ>> ՍՊ ընկերությունը նախատեսում է հավաքել միայն կապար-թթվային մարտկոցներ (նկար 1)։

Կապար-թթվային մարտկոցները հիմնականում օգտագործվում են ավտոմեքենաներում։ Նրանք մեծամասամբ կազմված են վեց գալվանական բջիջներից, որոնցից յուրաքանչյուրի լարումը սովորաբար կազմում է 2 Վ։ Ամեն բջջի կատոդը պատրաստվում է կապարի երկօքսիդից (PbO_2), իսկ անոդը՝ կապարից։ Երկու էլեկտրոդները գտնվում են ծծմբական թթվի լուծույթի մեջ։

Կապար-թթվային մարտկոցը <u>երկրորդային</u> մարտկոց է։

Նկար 1. Ավտոմեքենաների կապար-թթվային մարտկոց

3.2. Մարտկոցների գործածության գործունեության տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Ինչպես նշված է սույն հայտի նախատեսվող գործունեության իրականացման շրջանակներում Ձեռնարկողը նախատեսում է բնակչությունից և կազմակերպություններից գնել բանեցրած թթվային մարտկոցներ և նախատեսված գործունեությամբ սահմանված գործողությունների/գործածության ձևերի իրականացմամբ նախաձեռնել առևտրային գործունեություն՝ շահույթ ստանալու նպատակով: Այս գործունեության ձևը կապահովի նաև զգալի բնապահպանական արդյունք, քանի որ թույլ կտա կանխել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը ծանր մետաղներով և թթվային հոսքերով: Մարտկոցները ընդունվելու են արտադրական տարածքի առանձին, սույն գործունեության իրականացման համար նախատեսված փակ շինության մեջ:

Աշխատանքային տարածքը զբաղեցնում է 521.4 ք.մ, տարածքները մեկուսացված են միջնապատերով, որոնք կահավորված են դռնային անցումներով:

Մոտավոր հեռավորությունը բնակելի տներից 280 մետր է:

Շինության սխեմատիկ հատակագիծը, և մանրամասը ֆունկցիոնալ նկարագիրը կներկայացվի նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունում, որը կներկայացվի փորձաքննության հիմնական փուլում՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի կողմից տրամադրվելիք տեխնիկական առաջադրանքը:

Դատարկ վիճակում բերված մարտկոցները տեղափոխվում են բետոնապատ հատակով պահեստ և տեղադրվում պալլետների վրա, իսկ փակ (թթու պարունակող) մարտկոցները տեղափոխվում են առանձնացման-տեսակավորման տեղամաս, որը գտնվում է նույն շինության հատուկ առանձնացված տեղամասում: Այստեղ համապատասխան ուսուցում անցած և հատուկ արտահագուստով բանվորը բացում է մարտկոցի խցանները և բջիջների մեջի լուծույթը դատարկում հատուկ թթվակայուն նյութից պատրաստված հարմարեցված փականներով

հերմետիկ տարողության մեջ: Նախատեսված է տեղակայել 2 տոննա ընդհանուր տարողությամբ տարաներ:

Դատարկած մարտկոցները նույնպես տեղափոխվում են պահեստ:

Մարտկոցները վաճառվելու են տեղում կամ արտահանվելու են:

Մատակարարները իրենց տրանսպորտային միջոցներով մարտկոցները հասցնելու են մինչև նախատեսվող գործունեության ընդունման կետ, որտեղ տեղադրված կշեռքների միջոցով որոշվելու է մարտկոցների քաշը: Ընդունելուց հետո, առանձնացվելու են մարտկոցների պինդ և հեղուկ թափոնները: Ինչպես նշվեց վերևում, պինդ թափոնները կուտակվելու են նախատեսվող գործունեության տարածքում և ժամանակավոր կուտակվում մեկուսացված առանձին տարածքում պալետների վրա, իսկ հեղուկ մասը որը հիմնականում թթվային լուծույթն է, կուտակվելու են հատուկ տարաներում, ապա մղվում նստեցման տարողություն, զտված լուծույթը ենթարկվում է չեզոքացման CaO-ով, իսկ զտվածքը կհավաքվի տարողությունում և կպահվի ընկեության տարածքում մինչև կհանձնվի թափոն վերամշակող լիցենզավորված ընկերության: Ձեռնակողը այս գործունեությունը իրականացնելու է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններով սահմանված պահանջներին համապատասխան:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածք

3D
N

3.3. Արտադրողականությունը և օգտագործվող նյութերը

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ընկերության ընդհանուր կանոնադրական գործունեության շրջանակներում:

Ըստ նախնական հաշվարկների մարտկոցների հավաքման ծավալները տարեկան կազմելու են մոտ 1000 տոննա, որի պարագայում պինդ թափոնները կկազմեն մինչև 95%: Քանակական ծավալները ներկայացված միջակայքը պայմանավորված է այն հանգամանով, որ գործունեության բնույթից ելնելով դժվար է նախապես կանխատեսել հստակ քանակներ, ինչպես նաև հստակ հարաբերակցություն պինդ և հեղուկ թափոնների քանակների համար:

3.4. Էլեկտրոլիտի չեզոքացում

Էլեկտրոլիտը կուտակիչներից լցնում են ընդունիչ տարողություններ՝ պատրաստված թթվակայուն պլաստիկից (վինիպլաստ, ապակեպլաստիկ և այլն):

Ըստ կուտակման, էլեկտրոլիտն ընդունիչ տարողությունից պոմպով մղվում է նստեցման (պարզեցման) տարողություն, որտեղ կատարվում է շլամի մասնիկների նստեցում: Շլամն էլեկտրոլիտում առաջանում է կուտակչի դրական ակտիվ զանգվածի մասնիկներից, որոնք կուտակվում են կուտակչի կորպուսի հատակում և կազմված է հիմնականում կապարի միացություններից (55-60% PbSO4, 20-25% PbO, 1-5% PbO, 1-5% մետաղական Pb): Նստեցման տևողությունը՝ մոտ 24 ժամ: Պարզարանի նստվածքը (PbO2 մասնիկներ) պարբերաբար հանվում և կուտակվում է տարողության մեջ հետագայում պայմանագրային հիմունքներով կվաճառվի կապարի ձուլմամբ զբաղվող ընկերություններին:

Պարզեցված էլեկտրոլիտը մատուցվում է չեզոքացուցիչ, որտեղ տալիս են չեզոքացնող ազդանյութի լուծույթ: Չեզոքացումը իրականացվելու է CaO-ով, որը համեմատաբար էժան է և արտադրվում է ՀՀ-ում: Մանրամասն հաշվարկները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

Աշխատանքային պայմաններ

Ընկերությունում աշխատողների սանիտարակենցաղային պայմանները ապահովված են՝ սանհանգույց, հանդերձարան, ցնցուղարան:

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՍՊԳ)

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի, նշված գործունեության համար սանիտարապաշտպանիչ գոտի սահմանված չէ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Հիմնական բնապահպանական և առողջապահական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են բանեցրած մարտկոցների բաղադրության հետ: Մարտկոցները կարող են պարունակել թթվային մնացորդներ՝ ծծմբական թթու և դրանով պայմանավորված հեղուկ մասի արտահոսքի ռիսկեր: Այդ ռիսկերը ամբողջովին բացառվում են, քանի որ տարանջատման գործընթացը իրականացվելու է առանձին մեկուսացված տարածքում և հավաքվում է հերմետիկ տարաներում: Տեսականորեն, նմանատիպ գործունեության ռիսկերից է նաև թթվային լուծույթի հետ աշխատող անձնակազմի հնարավոր այրվածքները, որի ռիսկերը նույնպես կառավարելի են, քանի որ մարկոցներում եղած լուծույթները բանեցրած են, ոչ խիտ և բացի դա անձնակազմը բացառապես աշխատելու է հատուկ հանդերձանքով: Նախատեսվող գործունեության այս ձևում պինդ թափոններում առկա է կապարի պարունակություն, որը սակայն կուտակվում է հատուկ առանձնացված, մեկուսացված տեղամասում՝ բացառելով դրա տարածման/մուտքի ռիսկերը շրջակա միջավայր:

Ծծմբական թթուն ազդում է մաշկի, լորձաթաղանթի մեմբրանների, շնչուղիների վրա պատճառելով քիմիական այրվածքներ: Շնչառության ժամանակ օրգանիզմում առաջացնում են թթվածնային քաղց, հազ, բրոնխիտ և այլն:

ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 6-ի N 27-Ն հրամանով սահմանված են կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի առավելագույն և միջին հերթափոխային սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները, քիմիական նյութերի վտանգավորության դասը և աշխատողների օրգանիզմի վրա հնարավոր վնասակար ազդեցությունը: Ըստ նշված նորմատիվ ակտի ծծմբական թթվի ցուցանիշները բերված են աղյուսակում:

Աղյուսակ. Ծծմբական թթվի պարունակության նորմը աշխատանքային գոտում

Նյութի անվանումը	Սահմանային թույ-լատրելի կոնցենտ-ռացիան (ՍԹԿ), մգ/մ³	Նյութի գերակշռող ագրեգատային վիճակը	Վտանգավո-ության դասը
Ծծմբական թթու	1.0	աերոզոլ	2

Ծծմբական թթվի աերոզոլների միջին օրական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) բնակավայրերի օդում կազմում է 0.3 մգ/մ³, միջին օրական ՍԹԿ՝ 0.1 մգ/մ³:

4.2 Թափոնների կառավարում

Բանեցված թթվային մարտկոցների ընդունման և առաքման համար նախապատրաստման ընթացքում առաջանում են մարտկոցներում պարունակվող էլեկտրոլիտի թափոններ, որոնք համապատասխանում են ՀՀ բնապահպանության (ներկայում՝ շրջակա միջավայրի) նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հավելված՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ի «Բանեցված կուտակիչների ծծմբական թթուներ» թափոնատեսակին, դասիչ՝ 5210010102012:

Բանեցված թթվային մարտկոցներ որոնք համապատասխանում են ՀՀ բնապահպանության (ներկայում՝ շրջակա միջավայրի) նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հավելված՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ի «Բանեցված կապարե կուտակիչներ» թափոնատեսակին, դասիչ՝9211010013012

4.3 Նախատեսված մեղմացնող միջոցառումները

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Բանեցրած մարտկոցները պահեստավորել հատուկ հատկացված պահեստային տարածքներում;
- Պահեստները պետք է լինեն փակ շինություններում, ունենան սալիկապատ հատակներ և կահավորված լինեն օդափոխության համակարգերով;
- Պահեստը պետք է ունենա հակահրդեհային համակարգ;
- Պարբերաբար նախատեսվում է իրականացնել բանվորական միջավայրի, դեֆլեկտորների և թթվային լուծույթի կուտակման հանգույցի մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում՝ սարքավորումների կարգաբերում;
- Բանեցրած մարտկոցների և թթվի մնացորդների հետ աշխատելիս անձնակազմը կրելու է հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ;
- Սպասարկող անձնակազմը անցնելու է նախնական և պարբերական հրահանգավորում;
- Գնված թափոնները տեղափոխվեն փակ թափքով տրանսպորտային միջոցներով:

4.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Նախատեսվող գործունեության ընթացքում նյութերից օգտագործվելու են հատուկ թթվակայուն նյութից պատրաստված տարողություններ:

Բնառեսուրսներից նախատեսվում է օգտագործել միայն ջուր՝ սպասարկող անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Այդ ծավալները կախված են սպասարկող անձնակազմի թվից և գնահատվում են՝ 75 – 100 լ/օր:

Այս ուղղությամբ մանրամասն տեղեկատվությունը կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում:

Նախատեսվող գործունեության համար չեն օգտագործվելու նոր հողատարածքներ, բուսական և կենդանական աշխարհին վտանգ չի սպառնալու: Նախատեսված են նաև հարակից տարածքների բարեկարգում:

Բոլոր տեսակի հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման միջոցառումները և մոնիտորինգային գործողությունները կներկայացվեն համապատասխանաբար բնապահպանական և սոցիալական կառավարման, ինչպես նաև մոնիտորինգի պլաններում, որոնք կմշակվեն լիազոր մարմնի կողմից տրամադրվելիք տեխնիկական առաջադրանքի հիման վրա և մաս կկազմեն ՇՄԱԳ հաշվետվությանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (c) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (d) Տեղամասերում համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Էլեկտրոլիտի չեզոքացման գործընթացը կազմակերպել տեխնոլոգիական ռեգլամենտին համապատասխան մթնոլորտ լրացուցիչ արտանետումներից խուսափելու համար (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն հնարավոր թափոններից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով
	Աղմուկ	(a) Նախատեսվող գործունեության իրականացումը աղմուկ առաջացնող առաջացնող գործընթացներ չի ներառում:
	Թափոնների կառավարում	(a) Դատարկ վիճակում բերված մարտկոցները տեղափոխվում են բետոնապատ հատակով պահեստ և տեղադրվում պալլետների վրա (b) Էլեկտրոլիտը դատարկել և պահել հատուկ թթվակայուն նյութից պատրաստված հարմարեցված փականներով հերմետիկ տարողության մեջ: (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a)
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի ընկերությունում; - Նախատեսվող գործունեության բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Ընկերության տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, տեխնիկայի կայանման համար: - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *<<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),*
2. *<<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),*
3. *<<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),*
4. *<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),*
5. *<<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),*
6. *<<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,*
7. *<<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,*
8. *<<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:*
9. *«Հայաստանի ազգային ատլաս», Հատոր Ա « Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ.*
10. *ՀՀ Կարմիր գիրք « Բույսեր», 2010թ.*
11. *ՀՀ Կարմիր գիրք « Կենդանիներ», 2010թ.*
12. *Հայաստանի բնաշխարհ, Երևան, 2006թ.*
13. *Բուսական աշխարհի մասին ՀՀօրենքը, 1998թ.*
14. *Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը, 2000թ.*
15. *ՀՀ հողային օրենսգիրք, 2001թ.*
16. *ՀՀ ջրային օրենսգիրք, 2002թ.*

Հավելվածներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «29» Սեպտեմբերի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՎԱՀՐԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ ք. Մաշտոց փողոց 2 փակուղի 0

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր վավերացված Վաղարշապատ նոտարական տարածքում 25/09/2017թ, ս/մ 6106

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-002-0485-0045

Մակերեսի չափը (հա)՝ 0.199

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Պահեստարանների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	04-002-0485-0045-001-000	Պահեստ	521.4 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	04-002-0485-0045-002	Պահեստ	21.9 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	04-002-0485-0045-003	կշռատուն	15.4 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գեղամ Ավետիսյան

Ստորագրությունը՝ Գրանցված պաշտոնը՝ Մարզերի միավորված ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

Նոտարական ակտի կոդ: 457-20200318-37-4522772
Նոտարական ակտի գաղտնագիր: XKCPWF

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՏԱՍՆՈՒԹԻՆ

Մի կողմից ՀՀ քաղ. **ՎԱՀՐԱՄ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ**, ծնված՝ 24/07/1964թ-ին, ՀԾՀ՝ 3407640390, նույնականացման քարտ՝ 000204446, տրված՝ 057-ի կողմից, 04/11/2012թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԿՈՍՏԱՆՅԱՆ Փ., 1 Շ, 7ԲՆ այսուհետ « Վարձատու»
Մյուս կողմից «ՏԻԿ-ՄԵՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, հասցե՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ. / 32, գրանցման համար՝ 99.110.1121602, ՀՎՀՀ՝ 04434484, ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ **ԿՈՐՅՈՒՆ ՌՈՍՏՈՄԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ**, ծնված՝ 28/12/1989թ-ին, ՀԾՀ՝ 3812890623, անձնագիր՝ AS0408220, տրված՝ 057-ի կողմից, 26/10/2018թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ., 32 Տ, այսուհետ՝ «Վարձակալ»,

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին
1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ
1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել հետևյալ գույքը՝ **ՀՀ, Մարզ Արմավիր, համայնք Վաղարշապատ ք. Մաշտոց փողոց 2 /երկու/ փակուղի 0 /զրո/ հասցեում գտնվող անշարժ գույքը, որը բաղկացած է 521.4 /հինգ հարյուր քսանմեկ ամբողջ չորս/ քմ սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության պահեստից, 21.9 /քսանմեկ ամբողջ ինը/ քմ սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության պահեստից, 15.4 /տասնհինգ ամբողջ չորս/ քմ սեփականություն հանդիսացող կշռատնից 0.199 /զրո ամբողջ հարյուր իննսունինը/ հա սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության պահեստարանների հողամասից**, այսուհետ՝ «Գույք»:
1.2 Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29/09/2017թ. տրված թիվ 29092017-04-0019 սեփականության իրավունքի գրանցման վկայականի:
1.3 Գույքը վարձակալին պետք է հանձնվի 2020 թվականի մարտի 18 /տասնութ/-ից:
1.4 Գույքը կօգտագործվի ըստ նպատակային նշանակության:
1.5 Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
1.6 Պայմանագիրը կնքելու պահին անշարժ գույքը գրանցված սահմանափակումներ չունի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից 28/02/2020թ. տրված թիվ ՄՏ-28022020-04-0341 միասնական տեղեկանքի:
558.7քմ շենք շինություններից՝ 521.4քմ պահեստ, 21.9քմ պահեստ, 15.4քմ կշռատուն

1.7 Վարձակալության հանձնված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:
2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2.1 Վարձատուն իրավունք ունի՝
2.1.1 Վարձակալից պահանջել գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.
2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.
2.1.3 Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:
2.2 Վարձատուն պարտավոր է՝
2.2.1 Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2 Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:
2.3 Վարձակալն իրավունք ունի՝
2.3.1 Պահանջել Վարձատուից սույն պայմանագրով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.
2.3.2 Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.
2.3.3 Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
2.3.3.1 Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը.
2.3.3.2 Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:
2.4 Վարձակալը պարտավոր է՝
2.4.1 Ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.2 Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը:
2.4.3 Կատարել վարձակալած գույքի հետ կապված բոլոր վճարումները, կոմունալ ծախսերը և ընթացիկ շինարարական և վերանորոգման ծախսերը :
Տուգանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:
2.5 Վարձավճարի չափը սահմանված է **ամսական 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ /առանց հարկերի/, որը Վարձակալը պետք է վճարի յուրաքանչյուր հաջորդող ամսվա 29/քսանիններին/:**
2.6 Վարձակալը կարող է գույքը հանձնել ենթավարձակալության առանց վարձատուի գրավոր համաձայնության:
2.7 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:
2.8 Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունն ստուգելիս:
2.9 Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
2.10.1 Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.
2.10.2 Էականորեն վատթարացել է գույքի վիճակը.
2.10.3 Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:
3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ
3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 18 /տասնութ/-ից և գործում է անորոշ ժամկետով:
3.2 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել վարձակալության պայմանագրից, այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ տեղեկացնելով:
4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ
4.1 Պայմանագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել համաձայն ՀՀ Քաղ. օր-ի 468 հոդվածի, նոտարական վավերացմամբ, կողմերի ստորագրած գրավոր համաձայնությամբ:
4.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատական մարմինների քննությանը:
4.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին: Օրինակներից մեկը տրվում է վարձակալին ՝ « Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին » ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն, 30 աշխատանքային օրյա ժամկետում ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը ներկայացնելու և գույքի նկատմամբ իրավունքը գրանցելու համար: Պայմանագրի մյուս օրինակները տրվում են կողմերին

մերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության կամ սպառնալիքի դեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական ադրություններին, ինչպես նաև կողմերը օրենքով սահմանված կարգով ատասխանատվություն են կրում կեղծ փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում միմյանց ասցված նյութական և բարոյական վնասի համար:

Վարձակալ

Վարձակալ

Հայաստանի Հանրապետության անունից, քաղաք Երևան
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՏԱՍՆՈՒԹԻՆ
սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Երևան նոտարական տարածքի նոտար Աստղիկ Հայկազի Մազմանյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունք(ներ)ը ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի հանձնապատասխան ստորաբաժանումում:
Գրանցված է գրանցամատյան 1256
Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասն հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:
Նոտար՝ Աստղիկ Հայկազի Մազմանյան

Մատակարարը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Ք.Երևան,Աբովյան 66ա
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
ի դեմս Գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի, որը գործում է
(անունը, ազգանունը, պաշտոնը)
Ընկերության կանոնադրության և ԼՋ N 0001 Լիցենզիայի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և բաժանորդը՝ Ակսու ավագանի հանրակրթական
(անունը, հայրանունը, ազգանունը)
ք. Հրազդան Գեղ. մ. Ռուսաստանի Դաշնության 219
(բնակության վայրը, միացման կետի հասցեն)

մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են.
   1) **հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
   2) **կանոններ՝** հանձնաժողովի կողմից հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.
   3) **առևտրային հաշվառքի սարք՝** պետական չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված ու կապարակնքված խմելու ջրի քանակի հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են սույն պայմանագրում.
   4) **առևտրային հաշվառքի սարքի խախտում՝** պետական չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատված առևտրային հաշվառքի սարքի առանձին մասի խափանումը կամ վնասումը, կամ կապարակնիքի բացակայությունը կամ վնասումը, կամ կեղծումը, կամ սարքի բնականոն աշխատանքի որևէ այլ խաթարումը՝ արտաքին միջամտությամբ կամ առանց դրա.
   5) **հաշվարկային ամիս՝** ժամանակահատված, որը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24:00-ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է բաժանորդին մատուցել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)
(խմելու ջրի մատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման))

ծառայություններ (այսուհետ՝ ծառայություններ), իսկ բաժանորդը՝ վճարել դրանց դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

4. Բաժանորդը պարտավոր է՝
   1) վճարել մատուցված ծառայությունների դիմաց՝ կանոններով և սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում,
   2) թույլ չտալ առևտրային հաշվառքի սարքի խախտում,
   3) մատակարարի ներկայացուցչի կողմից ծառայողական վկայական ներկայացնելու դեպքում չխոչընդոտել նրա մուտքն իր սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայության համատեղ ստուգման նպատակով,
   4) առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ մատակարարված խմելու ջրի որակի վերաբերյալ կասկած առաջանալու պարագայում առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել մատակարարին,
   5) ջրամատակարարվող տարածքի նկատմամբ իրավունքի դադարման դեպքում դիմել մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, սույն պայմանագիրը լուծելու և ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար, ինչի վերաբերյալ մատակարարը տեղեկանք է տալիս բաժանորդին:

5. Բաժանորդն իրավունք ունի՝
   1) մատակարարի կողմից նախորդ հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի մասին կանոններով սահմանված կարգով և ժամկետում չծանուցման դեպքում մինչև ծանուցվելը կանոններով սահմանված կարգով չվճարել մատուցված ծառայությունների դիմաց,
   2) պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
   3) կապարակնքել առևտրային հաշվառքի սարքը,
   4) մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

6. Մատակարարը պարտավոր է՝
   1) ապահովել բաժանորդին ծառայությունների հուսալի մատուցումը՝ ծառայություններին ներկայացվող նորմատիվ պահանջներին համապատասխան,
   2) իր հաշվին իրականացնել առևտրային հաշվառքի սարքի տեղակայումը և կապարակնքումը՝ կանոններով սահմանված կարգով,
   3) առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումը, ստուգաչափումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
   4) առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման դեպքում իր հաշվին տեղակայել նոր առևտրային հաշվառքի սարք՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
   5) կանոններով սահմանված կարգով և ժամկետում սպառիչ պատասխանել բաժանորդի դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դիմումի առնչությամբ գործող իրավական դաշտը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
   6) բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը կամ ընդհատումը, դրա վերականգնումը և այդ մասին բաժանորդին իրազեկումն իրականացնել կանոններով սահմանված կարգով և ժամկետում,
   7) կազմել և բաժանորդին ներկայացնել մատուցված ծառայությունների քանակի և դրա դիմաց բաժանորդի կողմից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվություն՝ կանոններով սահմանված կարգով,
   8) մատուցած ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի վերաբերյալ բաժանորդի առարկության դեպքում վերջինիս պահանջով կանոններով սահմանված ժամկետում պարզաբանել մատուցված ծառայությունների քանակի և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկված մեծությունների ճշտությունը, անհրաժեշտության դեպքում կանոններով սահմանված կարգով կատարել ուղղում, չդադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը, եթե վերջինս վճարել է ծառայությունների՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Բաժանորդը պետք է ողջամտորեն հիմնավորի իրեն մատուցված ծառայությունների վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին,
   9) գործարկել բաժանորդին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:

7. Մատակարարն իրավունք ունի՝
   1) բաժանորդին ծառայողական վկայական ներկայացնելով և վերջինիս սեփականությունը հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործելով, բաժանորդի հետ համատեղ ստուգել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման, ապօրինի միացման կամ առևտրային հաշվառքի սարքի (անկախ դրա պատկանելությունից) խախտման դեպքերի առկայությունը,
   2) միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ բաժանորդի կողմից սույն պայմանագրի 4-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պարտավորությունը չկատարելու դեպքում:

4. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Բաժանորդին հաշվարկային ամսում մատակարարված խմելու ջրի քանակը որոշվում է սույն պայմանագրի հավելվածում նշված առևտրային հաշվառքի սարքի գրանցած ցուցմունքներով, իսկ դրա բացակայության դեպքում՝ կանոնների համաձայն:
9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
10. Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) դեպքում հաշվարկման և վերահաշվարկման ժամանակ հեռացվող կեղտաջրերի քանակն ընդունվում է հավասար բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակին:
11. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում կատարվում է բաժանորդին մատակարարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկ՝ կանոններով սահմանված կարգով և ժամկետում:
12. Բաժանորդի կողմից վերահաշվարկի արդյունքին անհամաձայնության դեպքում տարաձայնությունները լուծվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, ընդ որում՝ վերահաշվարկված խմելու ջրի արժեքի՝ բաժանորդի կողմից ողջամտորեն հիմնավորված չվիճարկվող մասի վճարման դեպքում բաժանորդին ծառայությունների մատուցումը չի դադարեցվում մինչև վեճի վերջնական լուծումը:

5. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հաշվարկային ամսվա ընթացքում բաժանորդին մատուցված ծառայությունների արժեքը որոշվում է հանձնաժողովի սահմանած սակագների և մատակարարված ծառայությունների քանակի արտադրյալով:
14. Հանձնաժողովի սահմանած սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից:
15. Մատակարարը իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում տեղադրում է հաշվարկային ամսում բաժանորդին մատուցված ծառայությունների քանակի և արժեքի մասին տեղեկատվություն՝ կանոններով սահմանված ժամկետում:
16. Բաժանորդը հաշվարկային ամսվա համար մատուցված ծառայությունների դիմաց վճարում է սույն պայմանագրի 15-րդ կետում նշված տեղեկատվության հրապարակումից հետո՝ կանոններով սահմանված ժամկետում:
17. Կանոններով սահմանված ժամկետում վճարում չկատարվելու դեպքում մատակարարը կանոններով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնում է բաժանորդին՝ վճարման, իսկ վճարումը չկատարելու դեպքում՝ ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Եթե զգուշացման պահից կանոններով սահմանված ժամկետում բաժանորդը վճարում չի կատարում, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը: Բաժանորդի կողմից պարտքն ամբողջությամբ վճարելուց և այդ մասին մատակարարին հայտնելուց (այդ թվում՝ հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո մատակարարը պարտավոր է վերսկսել ծառայությունների մատուցումը: Ծառայությունների մատուցումը վերսկսելուց առաջ մատակարարը իրավունք ունի տեղում ստուգել բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը:
18. Մատակարարն իրավունք չունի մատակարարվող ծառայությունների համար բաժանորդից պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել վճարման երաշխիք:
19. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկած խմելու ջրի արժեքը և տույժերը (հաշվարկված լինելու դեպքում) վճարվում են կանոններով սահմանված կարգով և ժամկետում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով, Կանոններով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:
21. Մատակարարը կանոններով սահմանված դեպքերում բաժանորդին վճարում է տուժանք՝ կանոններով սահմանված չափով և կարգով:
22. Մատակարարը և բաժանորդը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

23. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և, միևնույն ժամանակ, անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

24. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

25. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի միջնորդությամբ: Սույն պայմանը չի սահմանափակում կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

26. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:
27. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:
28. Հանձնաժողովի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ բաժանորդ) նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
29. Սույն պայմանագիրը լուծվում է՝
    1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
    2) բաժանորդի կողմից միակողմանի՝ այդ մասին մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.
    3) մատակարարի կողմից միակողմանի՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, կանոններով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
30. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:

10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

31. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար կանոններով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
32. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման հասցեի փոփոխության դեպքում գրավոր տեղեկացնել միմյանց ծանուցման նոր հասցեի վերաբերյալ:
33. Սույն պայմանագրի անբաժանելի մաս է կազմում առևտրային հաշվառքի սարքի վերաբերյալ հավելվածը:

Մատակարար՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գտնվելու վայրը՝ Ք.Երևան,Աբովյան 66ա
Հեռախոս՝ 1-85
ՀՎՀՀ՝ 02655115
էլ. փոստ՝ office@vjur.am
Հ/հ 11500351562015
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործունեության թույլատրագիր ԼՁ N 0001
Գլխավոր տնօրեն՝ ԹԱՄԱՍՅԱՆ
_____ Մ.Ծահինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.
Կատարող՝ _____
(Ստորագրություն)
(Մատակարարման ներկայացուցչի անունը)
_____
(պաշտոնը և անունը, ազգանունը)

15102788

Բաժանորդ՝ _____
(անուն, ազգանուն)
Բնակության վայրը՝ _____
Ծանուցման հասցեն՝ _____
Էլ. փոստ _____
Հեռախոս քաղ. _____
Հեռախոս բջջ. 098880099
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝
AT03/7576 28.11.2023
_____
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի մայիսի 31-ի N218Ն որոշման

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Ք. Էջմիածին 10. 09 20 20 թվական
(կնքման վայրը)

«ՀԷՑ» ՓԲԸ
«Մուսալեռ» մ/ճ «Էջմիածին» ՇԷՑ
Մատակարարը՝Ք.Էջմիածին Մաշտոցի 138
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս ՇԷՑ-ի պետ Ռ. Նազարյան
Լիազորագիր ՌՆ-01/18թ. 01.01.18թ.
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում
լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ «Տարի-Սեր» ՍՊԸ
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)
ի դեմս տնօրեն Գ. Հարությունյանի

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

3. **Մատակարարը պարտավոր է՝**

1) Լ. Էջոբարեանը փ. Կաճառոցի 2/դ փող. 40 հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

4. **Մատակարարն իրավունք ունի՝**

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. Սպառողը պարտավոր է

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. Սպառողն իրավունք ունի՝

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

12. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝ «Հեղկ» ՓԲԸ «Հասարակություն» ՕՖ և Հյուսիսֆե» ՀՍՀ

Գտնվելու վայրը՝ Հ. Հովսեփյան 13Ա

Հեռախոս 060-380-171

Էլ. փոստ echmiadzin elect@ena.am

ՀՎՀՀ 01520882

Հ/հ 24746631532953 50

Բանկ Կոմերցիոն

Գործունեության լիցենզիա N ՀՀԿԾ 019/1 ՀՀ Հանրային ծառայությունների հանձնաժողով

«Հասարակություն» ՓԲԸ
(ստորագրություն, անուն, ազգանուն)

01520882

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Սպառող՝ «ՍՊԿ-Մետ» ՍՊԸ

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝ Հ. Հովսեփյան 32

Ծանուցման հասցեն՝ Վ. Սարգսյան 2-րդ փողոց 10

Էլ. փոստ

Հեռախոս 096-000089

ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում) 04434484

Բանկ

Հ/հ

«ՍՊԿ-ՄԵՏ» ՍՊԸ
"TIK-MET"
"TIK-MET"
04434484
(ստորագրություն, անուն, ազգանուն)